# ԼՐԱՑՈՒՑԻՉ ՕՐԱԿԱՐԳ

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նիստի (N 12)**

26 օգոստոսի 2011թ. ժամը 15⁰⁰

1. Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության կողմից իրականացվող «Ավետիսյան դպրոցի կառուցում» ծրագրի մասին:
(Լուսինե Օհանյան)

## 2. Բարեգործական բեռների ներմուծման և բաշխման մասին
(Արման Բարխուդարյան)

2.1 Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին:

2.2 «Հայաստանի աթլետիկայի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին:

2.3 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի սեպտեմբերի 11-ի N Մ-642-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում» դրամաշնորհային ծրագիր):

2.4 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի դեկտեմբերի 24-ի N Մ-941-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռների ներմուծման մասին («Դիակոնիա» բարեգործական հիմնադրամ):

2.5 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի մայիսի 13-ի N Մ-345-Ա որոշման մեջ ու հաստատված ծրագրում փոփոխություն կատարելու և նույն որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Քարավան-88» բարեգործական հասարակական կազմակերպություն):

## 3. Հաստատված բարեգործական ծրագրերին հարակից գործարքների մասին
(Արման Բարխուդարյան)

3.1 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 28-ի N Մ-495-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին N 1 («Ջերմուկ սոցիալ-տնտեսական արգացմանն աջակցության» հիմնադրամ):

3.2 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի սեպտեմբերի 11-ի N Մ-642-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում» դրամաշնորհային ծրագիր):



3.3 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի սեպտեմբերի 11-ի N Մ-642-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին N 1 («Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում» դրամաշնորհային ծրագիր):

3.4 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 3-ի N Մ-409-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին («Շիկահող» պետական արգելոց ՊՈԱԿ):

3.5 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի հունիսի 14-ի N Մ-361-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին («Բժիշկներ՝առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղ):

3.6 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի օգոստոսի 17-ի N Մ-497-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Երևանի պետական համալսարան» ՊՈԱԿ):

3.7 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի օգոստոսի 17-ի N Մ-497-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին N 1 («Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Երևանի պետական համալսարան» ՊՈԱԿ):

3.8 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի N Մ-057-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպություն):

3.9 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի ապրիլի 30-ի N Մ-262-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին N 2 («Մատենադարան» հիմնադրամ):

3.10 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի դեկտեմբերի 24-ի N Մ-935-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Սի. Օ. Էյ. Էֆ» մանուկների բարեգործական հիմնադրամ):

## 4. Այլ հարցեր

4.1 «Հայաստանի ամերիկյան համալսարան» հիմնադրամի կողմից իրականացվող գույքի նվիրատվության մասին:

4.2 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի ապրիլի 30-ի N Մ-282-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու և 2009 թվականի սեպտեմբերի 11-ի N Մ-642-Ա, 2010 թվականի ապրիլի 30-ի N Մ-282-Ա ու մայիսի 3-ի N Մ-228-Ա որոշումներով հաստատված ծրագրերին հարակից գործարքի մասին (Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլյոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամ):

4.3 «Կյանքի հաց» հասարակական բարեգործական կազմակերպության կողմից իրականացվող Ժորա և Մարի Հունանյանների հիշատակին նվիրված «Միայնակ և անապահով ծերերի խնամք» ծրագրի մասին:

**ՆԱԽԱԳԻԾ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**2011 թվականի N Մ - - Ա**
**քաղ. Երևան**

12/1

**ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ԱՎԵՏԱՐԱՆՉԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԱՎԵՏԻՍՅԱՆ ԴՊՐՈՑԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի -ի N 3/3.8-1/ -11, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2011 թվականի -ի N -11, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության 2011 թվականի -ի N -11, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2011 թվականի -ի N 03/07-1/ -11, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի -ի N ԱԱ/3-4/ -11 ու Երևանի քաղաքապետին 2011 թվականի -ի N -11 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի կողմից իրականացվող՝ 7000000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ «Ավետիսյան դպրոցի կառուցում» ծրագիրը (կցվում է):

2. Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղին՝ նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության գիտության և կրթության նախարարություն, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Երևանի քաղաքապետին:

Հաստատված է
Ամերիկայի Հայ Ավետարանչական Ընկերակցության Հայաստանի Մասնաճյուղի
Տնօրեն Ռ. Լեոնյանի կողմից
«17» Օգոստոսի, 2011թ.

**ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ԱՎԵՏԱՐԱՆՉԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ 2011-2013 թվ. ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԱՎԵՏԻՍՅԱՆ ԴՊՐՈՑԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ» ԾՐԱԳԻՐ**

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Ծրագրի հիմնական նպատակն է հանդիսանում դպրոցի կառուցումը, որի արդյունքում անհրաժեշտ պայմաններ կապահովվեն կրթական ծրագրերի իրականացման համար: Շենքը կառուցվելու և հագեցած է լինելու արևմտյան զարգացած երկրներում կիրառվող նորագույն կրթական սարքավորումներով և տեխնոլոգիաներով: Նման պայմանների առկայությունը հնարավորություն կընձեռի այդ դպրոցին էլ ավելի բարձրացնել կրթության որակը՝ ժամանակակից նորամուծություններ բերելով հանրապետության կրթական համակարգում: Այսպիսով դպրոցի կառուցումը կնպաստի հետևյալ նպատակների իրականացմանը. Շենքը կլինի ժամանակակից սարքավորումներով հագեցված նոր լսարաններով, լաբորատորիաներով, գրադարաններով, բաց տարածքներով, մարզական դահլիճով, խաղավայրերով եւայլն: Այն կնպաստի Հայաստանի դպրոցական համակարգում առաջատար կրթական տեխնոլոգիաների ներմուծմանը, Հայաստանի տարածքում նորարարական ճարտարագիտական լուծումների ներմուծմանը, մասնավորապես բնապահպանման, արտանետվող նյութերի ֆիլտրացման համակարգ, հասարակության տարբեր խմբերի համար հարմարավետության ապահովում, մասնավորապես հաշմանդամների համար 100 տոկոս մատչելիության ապահովում, արևային էներգիայի օգտագործում և այլն: |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակները | Ծրագրի շրջանակներում ակնկալում ենք օգտվել հարկային և մաքսային արտոնություններից: |
| 3 | Բարեգործը | Ամերիկայի Հայ Ավետարանչական Ընկերակցություն, ԱՄՆ, Նյու Ջերսի, Փարամուս, 31 Ուեսթ Սենչյուրի Ռոուդ, Բարերար՝ Էդվարդ Ավետիսյան: |
| 4 | Ծրագիրը կատարող | Ամերիկայի Հայ Ավետարանչական Ընկերակցության Հայաստանի մասնաճյուղ ՀՎՀՀ 00032803, հասցե: Նիկոլ Դուման 22 |
| 5 | Ծրագրի իրականացման վայրը, բնագավառը | Ծրագրի իրականացման վայրն է Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Մալաթիա - Սեբաստի համայնք, Բաբաջանյան 42/7 2 հեկտար մակերեսով: Կառուցվելիք շենքի շուրջ նախատեսվում է բարեկարգել և կանաչապատել շրջակա տարածքը, ստեղծել այստեղ արևմտյան չափանիշներին համապատասխանող հանգստի գոտի, որը մատչելի կլինի դպրոցականների համար, իրականացնել նստարանների տեղադրում և լուսավորության անցկացում: |

| | | |
|---|---|---|
| | | Ծրագիրը առնչվում է սոցիալական և կրթական բնագավառներին: |
| 6 | Ծրագրի բյուջեն | Ծրագրի բյուջեն կազմում է մոտ 7000000/յոթ միլիոն ԱՄՆ դոլար, որը կազմում է մոտ 2555000000 / երկու միլիարդ հինգ հարյուր հիսունհինգ միլիոն ՀՀ դրամ : |
| 7 | Բարեգործություն ստացողը | Ծրագրի շահառուներն են համարվում.<br>• ԱՀԱԸ-ի Ավետիսյան Դպրոցի ներկա և գալիք աշակերտները, աշխատողներն ու դասախոսական անձնակազմը<br><br>*1997 թվականի դեկտեմբերի 05 –ին Ամերիկայի Հայ Ավետարանչական Ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի և Մալաթիա - Սեբաստիա քաղաքապետարանի միջև կնքվել է համաձայնագիր ըստ որի քաղաքապետարանը 99 տարի անհատույց օգտագործման է տրամադրել թիվ 277 մանկապարտեզի շենքը և տարածքը ՝ կրթական ծրագրերի իրականացման նպատակով.<br>Այժմ այդ շենքում իրականացվում է նախադպրոցական և միջնակարգ կրթություն:<br>Նախադպրոցական ծրագիրը իր մեջ ներառում է 4 տարիքային խմբեր՝ 3-5 տարեկան, յուրաքանչյուր խմբում 25 երեխա, և առաջնորդվում է ՀՀ ԿԳՆ նախադպրոցական ծրագրերով:<br>Դպրոցական ծրագիրը նույնպես աշխատում է ՀՀ ԿԳՆ կողմից հաստատված ծրագրերով, իսկ հավելյալ ուսումնասիրվող ծրագրերը հաստատվում են լեզվի բարեփոխումների կենտրոնում:<br>Դրոցական ծրագրերին հաճախում են 184 երեխաներ:<br>Նոր դպրոցաշենքի կառուցումը վերոհիշյալ երեխաներին կապահովի բարենպաստ պայմաններ իրենց կրթական ծրագրերը շարունակելու համար: |
| 8 | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագրի տևողությունն է մոտավորապես 28-30 ամիս:<br>Նախագծային աշխատանքները նախատեսված է սկսել 2011 թ. սեպտեմբերից և Շինարարական աշխատանքները նախատեսված է սկսել 2012 թ. Հունիս ամսից: |
| 9 | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Շինարարության ծրագիրը նախատեսվում է իրականացնել հետևյալ փուլերով.<br><br>1-ին փուլ՝, նախագծային և ճարտարապետական աշխատանքներ- 15 ամիս տևողության – մոտ 54750000 /հիսունչորս միլիոն յոթ հարյուր հիսուն հազար/ՀՀ դրամի չափով, որը կազմում է մոտ 150000/ հարյուր հիսուն հազար/ ԱՄՆ դոլար:<br><br>2-րդ փուլ՝ հողային, երկաթ-բետոնյա և մետաղական կարկասի աշխատանքներ 9-10 ամիս տևողությամբ - մոտ 730000000/ յոթ հարյուր երեսուն միլիոն/ ՀՀ դրամի չափով, որը կազմում է մոտ 2000000 /երկու միլիոն/ ԱՄՆ դոլար:<br><br>3-րդ փուլ՝ էլեկտրա-մեխանիկական աշխատանքներ 9-10 ամիս տևողությամբ - մոտ 730000000/ յոթ հարյուր երեսուն միլիոն/ ՀՀ դրամի չափով, որը կազմում է մոտ 2000000 /երկու միլիոն/ ԱՄՆ դոլար:<br><br>4-րդ փուլ՝ արտաքին և ներքին հարդարման աշխատանքներ, 9-10 ամիս տևողությամբ - մոտ 547500000 /հինգ հարյուր քառասունյոթ միլիոն հինգ հարյուր հազար/ ՀՀդրամի չափով, որը կազմում է մոտ |

| | | |
|---|---|---|
| | | 1500000/ մեկ միլիոն հինգ հարյուր հազար/ ԱՄՆ դոլար:<br><br>5.-րդ փուլ՝ շենքի շրջակա միջավայրի բարեկարգում՝ այգու հարդարում, կանաչապատում, լուսավորում և այլն, 6-8 ամիս տևողությամբ - մոտ 492750000 /չորս հարյուր իննսուներկու միլիոն յոթ հարյուր հիսուն/ ՀՀ դրամի չափով, որը կազմում է մոտ 1350000 / մեկ միլիոն երեք հարյուր հիսուն հազար/ ԱՄՆ դոլար<br>Վերը նշված փուլերի որոշակի աշխատանքներ կատարվելու են զուգահեռ, այնպես որ ամբողջ շինարարությունը ավարտված կլինի 28 ամսվա ընթացքում: |
| 10 | Ձեռք բերվող ներմուծվող ապրանքների, ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը | 1. Շինարարական աշխատանքների իրականացում – մոտ 2650000/ երկու միլիոն վեց հարյուր հիսուն հազար" ԱՄՆ դոլար, որը կազմում է մոտ 967250000/ինը հարյուր վաթսունյոթ միլիոն երկու հարյուր հիսուն հազար / ՀՀ դրամ<br>2. Շինարական նյութերի , դպրոցական գույքի, անհրաժեշտ սարքավորումների ծեռքբերում տեղական շուկայից – մոտ 492750000 /չորս հարյուր իննսուներկու միլիոն յոթ հարյուր հիսուն/ ՀՀ դրամի չափով, որը կազմում է մոտ 1350000 / մեկ միլիոն երեք հարյուր հիսուն հազար/ ԱՄՆ դոլար<br>3. Շինարական նյութերի , դպրոցական գույքի, անհրաժեշտ սարքավորումների ներմուծում – մոտ 1095000000/ մեկ միլիարդ իննսունհինգ միլիոն/ ՀՀ դրամի չափով, որը կազմում է մոտ 3000000/ երեք միլիոն / ԱՄՆ դոլար: |
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Նշված ծրագրի ընթացքում ֆինանսական միջոցները ուղղվելու են միայն շինարարական աշխատանքներ կատարելու և անհրաժեշտ շինանյութեր և սարքավորումներ ձեռք բերելու և ներմուծելու համար: Որևէ կազմակերպչական ծախսեր չեն նախատեսվում: |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Համագործակցությունը նախատեսվում է<br>• ՀՀ Կրթության և գիտության նախարարության հետ<br>• ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Նախատեսվում է իրականացնել ծրագրի արդյունավետության գնահատում շենքի կառուցման ղեկավարման և վերահսկման հանձնաժողովի կողմից՝ ելնելով սահմանված ամենաբարձր չափանիշներից:<br>Շենքի շահագործման օրվանից սկսած՝ սահմանված նպատակների նկատմամբ ամենօրյա հսկողություն կիրականացնեն ԱՀԱԸ-ի Հոգաբարձուների խորհուրդը, և վարչական ղեկավարման մարմինների կողմից:<br>Ծրագրի ընթացքի մասին պարբերաբար հաշվետվություններ կներկայացվեն նաև ՀՀ կառավարության առընթեր Բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի  Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Վ Ո Ր  Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ.     (+374 10)  59 52 26

16.08.11թ № 3/3.8-1/83027-11

Ձեր №

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պրն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 10.08.11թ. N 15/15.2/13465-11 գրության՝ կապված <<Ամերիկայի հայ ավենտարանչական ընկերության>> կողմից իրականացվող <<Ավետիսյան դպրոցի կառուցում>> ծրագրի մասին ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի հետ, հայտնում ենք հետևյալը.

1. նախագծին կից ծրագրի 10-րդ կետի 2-րդ պարբերությունում նշված արտերկրից ներմուծվող և հանրապետության ներսում ձեռքբերվող ապրանքների ու ծառայությունների արժեքները տարանջատել միմյանցից,

2. ծրագրի 9-րդ կետում նշված աշխատանքները նշել ըստ նախատեսվող գումարների:

Հարգանքով

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Ն. Հարությունյան, հեռ. 595-229

034/25051-11

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

*0078 Երևան, Հալաբյան 41 "ա", հեռ. 380385*
*Էլ. փոստ՝ grigor.mouradian@justice.am*

12.08.11թ.
N 5033-11

**Հայաստանի Հանրապետության կառավարության**
**բարեգործական ծրագրերի համակարգման**
**հանձնաժողովի նախագահ**
**պարոն Ս. Տեր-Սիմոնյանին**

**Ի կատարումն ՀՀ կառավարության 2011թ. օգոստոսի**
**10-ի 15/15.2/13465-11 թվակիր հանձնարարականի**

**Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան**

Հայտնում ենք, որ Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության կողմից իրականացվող «Ավետիսյան դպրոցի կառուցում» ծրագրի վերաբերյալ առաջարկություններ չունենք:

**Հարգանքով՝** **Գ. Մուրադյան**

**Կատարող՝ Իրավական ակտերի փորձաքննության գործակալություն,**
**Ա. Մկրտչյան, հեռ. 380-227**

035/25034-11

Դրամ 12/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ

37510, ք.Երևան, Հանրապետության հրապարակ
Կառավարական տուն 3
Հեռ.՝ 589080 Ֆաքս՝ 523200
www.mud.am
E-mail:info@mud.am

12.08.11 թN 01/13.2/3959-11

Ձեր N------------ ից------------------------

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման
հանձնաժողովի նախագահ
պարոն Ս.Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Քննարկելով Ձեր 2011 թվականի օգոստոսի 10-ի N 15/15.2/13465-11 գրությամբ ներկայացված «Ամերիկայի հայ ավետարանական ընկերակցության կողմից իրականացվող «Ավետիսյան դպրոցի կառուցում» Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագիծը, հայտնում եմ, որ նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

Հարգանքով
նախարարի ժամանակավոր
պաշտոնակատար

Ռ.Ալավերդյան

Ե.Աթայան
52-46-80

027/24954-11

---

Դրամ. 12/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ
И НАУКИ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА

REPUBLIC OF ARMENIA
MINISTRY OF EDUCATION
AND SCIENCE

DEPUTY MINISTER

0010, Երևան, Գլխավոր պողոտա, կառավարական տուն 3, Հեռ./Тел./Tel.: 58 03 02, ֆաքս/факс/fax (374 10) 52 73 43,
0010, Ереван, Главный проспект, Дом правительства 3, 0010, Main Avenue, Government House 3, Yerevan, E-mail: miens@edu.am, www.edu.am

N 01/02-1/8953 "11" 08 2011

*ՀՀ կառավարության բարեգործական*
*ծրագրերի համակարգման հանձնաժողովի*
*նախագահ պարոն Ս.Տեր-Սիմոնյանին*

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր սույն թվականի օգոստոսի 10-ի № 15/15.2/13465-11 գրության՝ հայտնում ենք, որ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության կողմից իրականացվող «Ավետիսյան դպրոցի կառուցում» որոշման նախագծի վերաբերյալ ՀՀ կրթության և գիտության նախարարությունը իր իրավասության շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունի:

*ՀԱՐԳԱՆՔՈՎ՝* *Մ.ՄԿՐՏՉՅԱՆ*

*Կատ. Ն.Սահակյան*
*հեռ. 524777*

031/24931-11

# ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ

Դրույց
12/1

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 02/16-29384 Ն «19» 08 2011թ.

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ս.Տեր-Սիմոնյան

Ձեր 10.08.2011թ. հ.15/15.21/13465-11 գրության վերաբերյալ՝ «Ամերիկայի Հայ ավետարանական ընկերակցության կողմից իրականացվող «Ավետիսյան դպրոցի կառուցում» ծրագիրը բարեգործական որակելու վերաբերյալ առարկություններ չունենք:

Կ. ԱՐԵՅԱՆ

Կատ. Ս. Միերյան
Է. Շաքարյան
Կ. Առաքելյան
Հեռ. 514 – 177

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ՀԱՆՁՆ ԲԱԺԻՆ
թիվ 100/2537/
«20» 08 2011թ.

I-Areyan-grutyun-ogostos-2011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

Դրույց 12/1

0015, Երևան, Մ.Խորենացու 3,
Հեռ. 50 20 20, 59 46 05

12.08.11թ.
N ԱԱ/3-4/5735-11

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 10.08.2011թ. թիվ 15/15.2/13465-11 գրությանը կից ներկայացված «Ամերիկայի Հայ ավետարանչական ընկերակցության կողմից իրականացվող «Ավետիսյան դպրոցի կառուցում» ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում եմ.

Որոշման նախագծին կից ներկայացված ծրագրում բավարար ձևով հիմնավորված չէ շինարարական աշխատանքների արժեքային մեծությունները, ինչպես նաև պարզ չէ, թե ո՞ր կազմակերպություններն են իրականացնելու շինարարական աշխատանքները:

Բացի այդ, անհրաժեշտ է ծրագրում տարանջատել ՀՀ տարածքում ձեռքբերվող և ներմուծվող սարքավորումները, շինարարական նյութերը և դրանց համապատասխան արժեքները:

Ա. Ալավերդյան

Անուղղակի հարկերի բաժին, հեռ.594652

044/25040-11

ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆՉԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆ — ARMENIAN MISSIONARY ASSOCIATION
Նիկոլ Դուման 22 — 22, Nigol Douman St.
Երեւան 0028-Հայաստան — Yerevan 0028-Armenia
Tel. (37410) 26-36-56, 27-28-92 (Local) Tel./Fax (37410) 23-02-76 E-mail: amaa.armenia@amaa.org

ՀԾ – 030/011
17. 08. 2011թվ.

Լրաց
12/1

ՀՀ կառավարության Բարեգործական Ծրագրերի
Համակարգման Հանձնաժողովի Նախագահ՝
Պրն. Ս. Տեր – Սիմոնյանին
Պատճենները՝ ՀՀ Ֆինանսների Նախարար՝
Պրն. Վ Գաբրիելյանին
ՀՀ Կառավարությանն առընթեր
Պետական եկամուտների կոմիտե նախագահ՝
Պրն. Գ. Խաչատրյանին

Հարգելի Պրն. Տեր- Սիմոնյան,

Ի պատասխան ՀՀ Ֆինանսների նախարարության 12.08.2011 թվականի թիվ 3/3.8-1/83027 և ՀՀ կառավարությանն առընթեր Պետական եկամուտների կոմիտեի 12.08.2011 թվականի թիվ ԱԱ/3-4/5735-11 գրությունների տեղեկացնում ենք Ձեզ, որ կապալառու կազմակերպությունները կընտրվեն մրցութային կարգով և հաղթող կազմակերպությունների հետ կկնքվեն համապատասխան պայմանագրեր : Տեղեկացնում ենք Ձեզ նաև , որ ծրագրում կատարել ենք լրամշակումներ՝ նախարարություններից ստացված դիտողությունների համաձայն :

Կից Ձեզ ենք ներկայացնում ծրագրի լրամշակված տարբերակը :

Խնդրում ենք այն քննարկել, դնել նիստի և որակել բարեգործական :

Կանխավ շնորհակալություն :

Հարգանքներով,

Ամերիկայի Հայ Ավետարանչական Ընկերակցության
Հայաստանի մ/ճ-ի Գործերի Կառավարիչ
Հարութ Ներսեսյան

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
094/25294
17 08 2011թ.

1767



Լրաց 12/1

**ՏԵՂԵԿԱՆՔ**

**Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության կողմից իրականացվող «Ավետիսյան դպրոցի կառուցում» ծրագրի նախագծի կապակցությամբ առաջարկությունների և դիտողությունների վերաբերյալ**

| Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը | Հիմնավորում |
|---|---|
| **ՀՀ ֆինանսների նախարարության դիտողությունների և առաջարկությունների վերաբերյալ** | |
| … ծրագրի 10-րդ կետի 2-րդ պարբերության ներմուծվող և հանրապետությունում ձեռք բերվող ապրանքներն ու ծառայությունները տարանջատել.<br>… ծրագրի 9-րդ կետում նշված աշխատանքները նշել ըստ նախատեսվող գումարների: | Դիտողությունն հաշվի է առնված, նոր ծրագիրը կցված է: |
| **ՀՀ ՊԵԿ-ի դիտողությունների և առաջարկությունների վերաբերյալ** | |
| … հստակորեն նշված չեն շինարարության արժեքային մեծությունը, ինչպես նաև պարզ չեն շինարարական աշխատանքները իրականացնողները.<br>… ներմուծվող և հանրապետությունում ձեռք բերվող ապրանքներն ու ծառայությունները տարանջատել.: | Դիտողությունն հաշվի է առնված, նոր խմբագրված ծրագիրը կցվում է: |

*ՆԱԽԱԳԻԾ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Դրույ 12/2.1

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**___ օգոստոսի 2011 թվականի N Մ- -Ա**

**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի օգոստոսի -ի N 3/3.8-2/-11, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2011 թվականի օգոստոսի -ի N ՀՔ/22/-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի օգոստոսի -ի N ԱԱ/3-6/5384-11 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի կողմից որպես օժանդակություն Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով ուղարկված դեղորայքի և բժշկական պարագաների (10 տեղ, 2665 կգ ընդհանուր քաշով, 183481.82 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 7040 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» ՏՄ) ներմուծման և անհատույց բաշխման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ նշված բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Վ Ո Ր Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ**

Դրույ 12/2.1

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

22.08.2011թ. №3/3.8-2/83433-1

Ձեր № ____________

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 22.08.2011թ. N15/15.6/13963-11 գրությամբ ներկայացված «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝

Ատոմ Ջանջուղազյան

034/25733-11
22.08.2011թ.

Կատարող՝ Ս. Այվազյան, հեռ. 595-227

Lpeuy


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ


12/2.1


Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3

հեռ. (+ 374 10) 58 24 13
ֆաքս (+ 374 10) 56 27 83
էլ. փոստ minister@moh.am


22.08.2011 N ԻՑ/22/7673-11

Ձեր N ____________________

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 22.08.2011թ. թիվ 15/15.6/13963-11 գրության կապակցությամբ՝ «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հայտնում եմ, որ ՀՀ առողջապահության նախարարությունն իր իրավասության շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Հ. ՔՈՒՇԿՅԱՆ

???? ?????????
Aug 22 2011 6:09 PM

Դեղորայքային քաղաքականության բաժին
Կատարող Ա.Մկրտչյան
հեռախոս 52 27 21

020/25765-11
23.08.2011թ

---


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ


Lpeuy


ք. Երևան-0015, Մ. Խորենացի 3, 7


№ ԱԱՆ/3-6/6024-11
25.08.2011թ

12/2.1

**ՀՀ կառավարության բարեգործական**
**ծրագրերի համակարգման**
**հանձնաժողովի նախագահ**
**պարոն Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ձեր ս/թ. օգոստոսի 22-ի համար 15/15.6/13963-11 գրությամբ կարծիքի ներկայացված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի՝ «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չունենք:

Ա. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

կատարող՝ Վ. Սարգսյան
միջազգային հարաբերությունների բաժին
հեռ. 59 43 49

044/25994-11
25.08.2011թ

**ՆԱԽԱԳԻԾ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

12/2.2

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

___ օգոստոսի 2011 թվականի N Մ- -Ա
քաղ. Երևան

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԹԼԵՏԻԿԱՅԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի օգոստոսի -ի N 3/3.8-2/-11, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության 2011 թվականի օգոստոսի -ի N 1/06/-11 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի օգոստոսի -ի N ԱԱ/3-6/-11 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ  է.***

1. Բարեգործական որակել Ֆրանսիայի «Հայ մարտիկների օժանդակ մարմին» ընկերակցության կողմից ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի միջոցով որպես օժանդակություն «Հայաստանի աթլետիկայի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության հասցեով ուղարկված համակարգչային սարքավորումների և մարզական գույքի (73 տեղ, 4847 կգ ընդհանուր քաշով, 74000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 6350 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. «Հայաստանի աթլետիկայի ֆեդերացիա» հասարակական կազմակերպությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի  Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Վ Ո Ր  Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ**

12/2.2

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

25.08.2011թ. № 3/3.8-2/8363

Ձեր № ______

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 23.08.2011թ. N15/15.6/14074-11 գրությամբ ներկայացված «Հայաստանի աթլետիկայի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ անհրաժեշտ է որոշման նախագծի 3-րդ կետում ներառել նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանը:

Հարգանքով՝

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Ա. Բաղդյան, հեռ. 595-227

034/26096-11
25.08.2011թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՊՈՐՏԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ
**ՆԱԽԱՐԱՐ**

☒ ՀՀ, Երևան-0001, Աբովյան 9
☎ 52-86-01
հեռապատճեն՝ 52-99-28, 52-88-77
էլ. փոստ՝ msy@msy.am

12/2.2

24 08 2011 թ. N 3/06/779-11

Ձեր 2011 թ. օգոստոսի 23-ի N 15/15.6/14074-11 գրության

*Հայաստանի Հանրապետության*

*կառավարության բարեգործական*
*ծրագրերի համակարգման*
*հանձնաժողովի նախագահ*
*Ս. Տեր-Սիմոնյանին*

*Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան*

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի ««Հայաստանի աթլետիկայի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը առաջարկություններ և դիտողություններ չունի:

*Հարգանքով՝*

*Ա. Պետրոսյան*

??????????????????

Կատարող՝ սպորտի բարձրագույն նվաճումների
քաղաքականության վարչություն
Ա. Կարապետյան, 52-99-79

022/25907-11
24.08.2011թ.

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
**ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ**

**ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ**

ք. Երևան-0015, Մ. Խորենացի 3, 7

№ ՄՄ/3-6/6002-11
24.08.2011թ

12/2.2

**ՀՀ կառավարության բարեգործական**
**ծրագրերի համակարգման**
**հանձնաժողովի նախագահ**
**պարոն Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ձեր ս/թ. օգոստոսի 23-ի համար 15/15.6/14074-11 գրությամբ կարծիքի ներկայացված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի՝ Ֆրանսիայի «Հայ մարտիկների օժանդակ մարմին» ընկերակցության կողմից ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի միջոցով որպես օժանդակություն «Հայաստանի աթլետիկայի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության հասցեով ուղարկված բեռի ներմուծման ծրագրի մասին> որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չունենք:

**Ա. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ**

044/25952-11
24.08.2011թ.

*կատարող՝ Վ. Սարգսյան*
*միջազգային հարաբերությունների բաժին*
*հեռ. 59 43 49*

## Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի աթլետիկայի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» որոշման նախագծի կապակցությամբ առաջարկությունների և դիտողությունների վերաբերյալ

| Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը | Հիմնավորում |
| --- | --- |
| ՀՀ ֆինանսների նախարարության դիտողությունների ու առաջարկությունների վերաբերյալ | |
| անհրաժեշտ է որոշման նախագծի 3-րդ կետում ներառել նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանը | Հաշվի է առնվել: |

<u>ՆԱԽԱԳԻԾ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

----- --------------- 2011 թվականի N Մ-        -Ա
քաղ. Երևան

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 11-Ի N Մ-642-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ ԲԵՌԻ ՄԱՍԻՆ («Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում» դրամաշնորհային ծրագիր)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի օգոստոսի 17-ի N 3/3.8-2/83182-11, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2011 թվականի օգոստոսի 17-ի N ՀՔ/22/7473-11 Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի օգոստոսի 24-ի N ԱԱ/3-6/6001-11 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության (ՊՈԱԿ) հասցեով Հնդկաստանից՝ դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ձեռքբերված բեռը (դեղեր՝ 87 տեղ, 1112 կգ ընդհանուր քաշով, 29935.01 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 310648 հնդկական ռուփի, «Արարատյան» տ/մ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի սեպտեմբերի 11-ի «Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում» դրամաշնորհային ծրագրի մասին (երկրորդ փուլ)» N Մ-642-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

17.08.11թ № 3/3.8-2/8318211

Ձեր № ____________

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 12.08.2011թ. N15/15.4/13578-11 գրությամբ ներկայացված Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի սեպտեմբերի 11-ի N Մ-642-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում ներմուծվող բեռի մասին («Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում» դրամաշնորհային ծրագիր) ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Ս. Այվազյան, հեռ. 595-227

N034/25223-11
17-08-11թ

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3
հեռ. (+ 374 10) 58 24 13
ֆաքս (+ 374 10) 56 27 83
էլ. փոստ minister@moh.am

17.08.11 N ՀՓ/22/7473-11

Ձեր N ____________

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 12.08.2011թ. թիվ 15/15.4/13578-11 գրության կապակցությամբ՝ «Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում» դրամաշնորհային ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հայտնում եմ, որ ՀՀ առողջապահության նախարարությունն իր իրավասության շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Հ. ՔՈՒՇԿՅԱՆ

???? ?????????
Aug 17 2011 12:20 PM

Կատարող Ա.Մկրտչյան
հեռախոս 52 27 21

N020/25242
17-08-11թ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ**
**ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ**

**ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ**

Կրուց

ք. Երևան-0015, Մ. Խորենացի 3, 7

N 2Կ/3-6/6001-11
24.08.11թ.

12/2.3

**ՀՀ կառավարության բարեգործական**
**ծրագրերի համակարգման**
**հանձնաժողովի նախագահ**
**պարոն Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ձեր ս/թ. օգոստոսի 22-ի համար 15/15.4/13967-11 գրությամբ կարծիքի ներկայացված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի՝ Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ձեռք բերված բեռի ներմուծման ծրագրի մասին> որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չունենք:

**Ա. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ**

*կատարող՝ Վ. Սարգսյան*
*միջազգային հարաբերությունների բաժին*
*հեռ. 59 43 49*

N 044/25950-11
24.08.11թ.

---

**<u>ՆԱԽԱԳԻԾ</u>**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Կրուց

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**___ օգոստոսի 2011 թվականի N Մ - -Ա**
**քաղ. Երևան**

12/2.4

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N Մ-941-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ**
**(«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի օգոստոսի -ի N 3/3.8-2/-11, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2011 թվականի օգոստոսի -ի N ՖԲ/ԱնՄ-/-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի օգոստոսի -ի N ԱԱ/3-6/5086-11 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Սահմանել, որ «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից ձեռք բերված սննդամթերքը (ոլոռ՝ 800 տեղ, 20032 կգ ընդհանուր քաշով, 29200 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 5800 ԱՄՆ-ի դոլար և արևածաղկի ձեթ՝ 1850 տեղ, 20130 կգ ընդհանուր քաշով, 62604 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 5800 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» ՏՄ, բաշխման ցանկերը կցվում են) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի դեկտեմբերի 24-ի «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Օժանդակություն Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական համայնքների ազգաբնակչությանը» ծրագրի մասին» N Մ-941-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Երևանի քաղաքապետին և Հայաստանի Հանրապետության Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի, Լոռու, Կոտայքի ու Տավուշի մարզպետներին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ

Դրույ 12/2.4

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

22.08.2011թ. №3/3.8-2/83437-11

Ձեր № ____________

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 22.08.2011թ. N15/15.6/13965-11 գրությամբ ներկայացված «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի դեկտեմբերի 24-ի N Մ-941-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռների ներմուծման մասին («Դիակոնիա» բարեգործական հիմնադրամ)» ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ անհրաժեշտ է որոշման նախագծի 2-րդ կետում ներառել նաև ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը:

Հարգանքով՝

Ատոմ Ջանջուղազյան

034/25744-11
22.08.2011թ.

Կատարող՝ Կ. Աղաջանյան, հեռ. 595-229

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

Դրույ 12/2.4

«24» 08 2011 թ. N ՏՖ/ԱՀվ-5/6984-11

Ձեր 2011-08-22, 15/15.6/13965-11

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի**
**համակարգման հանձնաժողովի նախագահ**
**պարոն Ս. Տեր-Սիմոնյանին**

**Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան**

Քննարկելով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի դեկտեմբերի 24-ի N Մ-941-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռների ներմուծման մասին («Դիակոնիա» բարեգործական հիմնադրամ)» որոշման նախագիծը՝ հայտնում եմ, որ նախարարությունը վերոհիշյալ ծրագրի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չունի:

